ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3516-Ա « 16 » հուլիսի 2026թ.

ԵՐԵՎԱՆ, ԱՐԱԲԿԻՐ, ԱՅԳԵՁՈՐԻ 78Ա ՓՈՂՈՑ, Հ.21 ՀԱՍՑԵՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԱՆՆԱ ԱՐԱՄԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ԵՎ ՊԱՏՐԻԿ ՕՆԻԿԻ ԱՃԵՄՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԵՎ ԱՅԳԵՁՈՐԻ ՓՈՂՈՑ, Հ.78/45 ՀԱՍՑԵՈՒՄ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԿԱՌՈՒՅՑՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ ինքնակամ կառույցը կառուցված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման ու անվտանգության գոտիներում և քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև ելնելով այն հանգամանքից, որ ինքնակամ կառույցը չի գտնվում հաստատված՝ պետական կամ համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերի նախատեսված գոտիներում, ղեկավարվելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքով, քաղաքացիական օրենսգրքի 188–րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերով, հիմք ընդունելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված 02.07.2026թ. մասնագիտական եզրակացությունները, հաշվի առնելով ինքնակամ կառույցը հաշվառված լինելու վերաբերյալ ՀՀ Կադաստրի կոմիտեի ղեկավարի տեղակալի կողմից տրված 12.06.2026թ. հ.ԳՄ/12215-2026 գրությունը, «ԱՐՏ-ԱՐՏ» ՍՊԸ-ի կողմից 21.05.2026թ. տրված հ.26/2.258 տեխնիկական դրական եզրակացությունը, ինքնակամ կառույցների արտաքին չափերի մասին «Ս ՖՈՌՄԱՏ ՍԹԱՅԼ» ՍՊԸ-ի կողմից 05.05.2026թ. տրված եզրակացությունը, կառույցն իրականացրած անձանց՝ ի դեմս ներկայացուցչի դիմումները (29.05.2026թ. Դ-55284-26, 16.06.2026թ. Դ-62077-26).

1.Երևան, Արաբկիր, Այգեձորի 78ա փողոց, հ.21 հասցեում, ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.15052026-01-0373 վկայական, ՀՀ կադաստրի կոմիտեում հաշվառման

ծածկագիր h.2026WHH3VH) քաղաքացիներ Աննա Արամի Վարդանյանին և Պատրիկ Օնիկի Աճեմյանին պատկանող հողամասում ինքնակամ իրականացրած 95.18 քառ.մետր ընդհանուր մակերեսով կառույցը (բնակելի շինություններ) ճանաչել օրինական:

2. Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1) սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, Երևան քաղաքի բյուջեի N900015211247 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի h.912-Ն որոշմամբ հաշվարկված 687676 (վեց հարյուր ութսունյոթ հազար վեց հարյուր յոթանասունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2) իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը.

3) սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում 2-րդ կետի 1-ին ենթակետով օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

3.Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող, Երևանի Այգեձորի փողոց, h.78/45 հասցեում գտնվող 184.26քմ ընդհանուր մակերեսով հողամասում կառուցված՝ բնակելի տանը կից օժանդակ շինություններ գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը (հիմք՝ ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի տեղակալի կողմից տրված 12.06.2026թ. h.ԳՄ/12215-2026 գրությունը), համարել Երևան քաղաքի սեփականությունը և այն ճանաչել օրինական (կցվում են հողամասի և շինությունների հատակագծերը):

4. Հիմք ընդունելով ՀՀ Երևան քաղաքի ավագանու 10.09.2024թ. h.204-Ն որոշումով հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծի դրույթները՝ 184,26քմ մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը սահմանել բնակելի կառուցապատման:

5. Սույն որոշման 3-րդ կետում նշված օրինականացված կառույցը և հողամասը՝ գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքի ձևով ձեռք բերելու առաջարկ կատարել կառույցն իրականացրած անձանց՝ Աննա Արամի Վարդանյանին և Պատրիկ Օնիկի Աճեմյանին, այսուհետ՝ Գնորդներ:

6. Լիազորել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետին՝ ինքնակամ կառույցն իրականացրած անձանց կողմից սույն որոշման 3-րդ կետում նշված կառույցի և դրա համար առանձնացված հողամասի օրինականացման համար սահմանված չափով և կարգով գումարների վճարումից և այդ մասին Երևան համայնքի բյուջեի համապատասխան հաշվին մուտքագրված լինելու փաստը հավաստող աշխատակազմի ֆինանսական վարչության կողմից տրամադրված գրավոր տեղեկանք-քաղվածքը ստանալուց հետո, 30-օրյա ժամկետում Երևանի քաղաքապետի անունից Գնորդների հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր:

7.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, դրա ուժի մեջ մտնելու օրվանից՝ երկամսյա ժամկետում:

8.Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ